ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5283-Ա « 29 » հոկտեմբերի 2026թ.

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2011 թվականի փետրվարի 11-ի հ.341-Ա և 2020 թվականի դեկտեմբերի 30-ի հ.4157-Ա որոշումները.

1.Լիազորել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից կնքել համաձայնագրեր՝ Երևանի քաղաքապետի 2007 թվականի ապրիլի 5-ի հ.697-Ա որոշման հիման վրա, Երևան քաղաքի Ողջաբերդի ջրանցքին հարակից տարածքի մասով կնքված կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին՝ դրանցում նախատեսելով, որ Երևանի քաղաքապետի անունից՝ որպես պայմանագրի կողմ, «Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերության փոխարեն լիազորվում է Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

2. Սույն որոշման կատարման կազմակեպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ